ԽԱՄԷԼԷՕՆ

(ԿԵՆԱՆՔԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ *)

Ժամանակակից հասարակութեան մէջ շատ տարածուած են այդ սողունի նման մարդկանց տեսակները...։

Քամէլէօնը, ինչպէս երևի լսել է ընթերցողը, ծառերի և թփերի վրայ ապրող մի տեսակ խլէզ է, որ զարմանալի յատկութիւն ունի.—հանգամանքներին նայած արագօրէն փոխել ոչ միայն իր կաշուի գոյնը, այլ և մարմնի ձևը, աւելի կամ պակաս ուռցնելով նրան։

Քաջութեան և ոյժի նշոյլ անգամ չունենալով այդ արարածները դրսից բաւական ահարկու են... որովհետև գլուխների ոսկորները պատերազմի աստուած Արէսի սաղաւարտի նմանութիւն ունեն, իսկ մէջքերին՝ ատամնաձև ցցուածքներ որ ցասման ժամանակ... գուցէ վախեցնեն միամիտներին...։

Ճիւղերի վրայ իր դրաւած դիրքը նա պինդ բռնում է իր ոլորուն պոչով և ունելիքանման թաթերով։ Եւ կամաց-կամաց վեր-վեր է բարձրանում աւելի յարմար տեղեր գրաւելու համար...։ Իսկ ոչն է գոյութեան կռուի մէջ խամէլէօնի գլխաւոր զէնքը։—Լեզուն։ Եթէ չլիներ այդ երկայն, ճկուն լեզուն՝նա սովից կը սատկէր...։ Մինչդեռ այդ լեզուի շնորհիւ նա բռնում է այն բոլոր դիւրահաւատ և կարճամիտ ճանճերին ու միջատներին, որոնք նստում են նրա շուրջը։ Իսկ միամիտ և դիւրահաւատ միջատների թիւն որքան շատ է...։ Եւ այդպիսով խամէլէօնը իր երկար ու լպրծուն լեզուի, ինչպէս

*) Տես «Մուրճ»-ի անցեալ համարը։

և գոյնը փոփոխելու յատկութեան շնորհիւ շատ յաջող կարիներա է անում բնութեան մէջ։ Մինթէ նոյն առաւելութիւններն չեն պահանջւում մարդկային հասարակութիւնների մէջ... «կարիեր անելու» համար...։

Կենդանաբանները ասում են թէ խամէլէօնների քառասուն և երկու առանձնատեսակութիւններ կան, սակայն ամենատարածուածը վուլգար մականունը կրող խամէլէօններն են։ Այդ «վուլգար» տեսակից կան Եւրոպայում, Փոքր Ասիայում և կից երկրներում...։ Կովկասի մասին գիտունները լռութիւն են պահպանում, սակայն ես կարող եմ երդուել որ մեզանում չափազանց շատ են «վուլգար» տեսակի... մարդ-խամէլէօնները...։

Եւ ի՞նչ նպաստաւոր պայմաններ դրանց զարգացման համար մեր կեանքում. դիւրահաւատ և կարճամիտ մարդուկ-միջատների հօտեր կամ խաւար ամբոխ և յարմար դիրքեր դրաւելու համար տնտեսական-հասարակական-պետական ծառերի ու թփերի բազմաթիւ ճիւղեր՝ պաշտօններ, դիրքեր...։ Բարձրացիր ճիւղերից մէկի վրայ, պոչովդ ու թաթերովդ պինդ ամրացիր տեղումդ, և, հանգամանքներին նայած, արագօրէն փոփոխիր գոյնդ, փքուն կամ նուաստ ձև ստացիր ու գործիր, գործիր անդադար երկայն, ճկուն ու լպրծուն լեզուովդ. սարդեր, իշաճանճեր, մեղուներ, պսպղուն բզէզներ, հացպիտիներ, հարսուկներ և այլն և այլն՝ բոլորը զոհ կը դառնան այդպիսի լեզուին... Եւ կեանքի մէջ յաջողութիւնդ կատարեալ է, ով առիւծանման խլէզ...

Սէլէն